ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

Հյուսիսային համալսարանի քոլեջում ուսանողական նպաստի ձևով իրականացվող ուսման վարձի ամբողջական կամ մասնակի փոխհատուցման գործընթացը կանոնակարգելու վերաբերյալ

20.05.2020թ. Թիվ 61/1

Հիմք ընդունելով Հյուսիսային համալարանի կանոնադրության 45-րդ կետի 12-րդ ենթակետը, Հյուսիսային համալսարանի քոլեջում ուսանողական նպաստի ձևով իրականացվող ուսման վարձի ամբողջական կամ մասնակի փոխհատուցման գործընթացը կանոնակարգելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել, որ

1.1. Համապատասխան մասնագիտությունների գծով Հյուսիսային համալսարանի քոլեջ ընդունված ուսանողներին, ովքեր ընդունելության քննություններին ապահովել են քննական առարկաներից առավելագույն բարձր գնահատականներ, ընդունվածների թվի 10 տոկոսի չափով (առնվազն 10 ընդունված ուսանողի դեպքում մեկ ուսանողի մասով) մրցութային կարգով տրվում է ուսումնառության 1-ին կիսամյակի համար ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի ամբողջական փոխհատուցում: Մրցույթում ներքոշարադրյալ առաջնայնությամբ հաղթող են ճանաչվում մեդալակիր դիմորդները, դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաներում առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդները, ավելի վաղ դիմած դիմորդները: Ուսումնառությունը հաջորդ կիսամյակներին շարունակվում է ուսման վճարի ամբողջական փոխհատուցմամբ, եթե անընդմեջ կիսամյակների ընթացքում ուսանողը ապահովում է առավելագույն բարձր գնահատականներ: Անընդմեջությունը ապահովված չլինելու դեպքում ուսանողը զրկվում է ուսանողական նպաստից: Առաջին կուրսի 1–ին կիսամյակում ուսման վարձի փոխհատուցումն իրականացվում է

մրցույթի արդյունքների ամփոփումից հետո 3–օրյա ժամկետում ընդունող հանձնաժողովի, իսկ հետագա կիսամյակների համար՝ կիսամյակին հաջորդող 5–օրյա ժամկետում քոլեջի տնօրենի կողմից ռեկտորին հասցեագրած զեկուցագրերի հիման վրա, որոնց կից ներկայացվում է առաջիկա կիսամյակի համար ուսանողին ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի ամբողջական փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ համապատասխան հրամանի նախագծերը՝ երկու օրինակից:

1.2. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում առնվազն 50 տոկոսի չափով առաջիկա կիսամյակի համար տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավելագույն գնահատականներ ապահոված ուսանողներին, կիսամյակին հաջորդող 5–օրյա ժամկետում քոլեջի տնօրենի կողմից ռեկտորին հասցեագրած զեկուցագրերի հիման վրա, որին կից ներկայացվում է առաջիկա կիսամյակի համար ուսանողին ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի 50 տոկոս փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ համապատասխան հրամանի նախագծերը՝ երկու օրինակից:

1.3. Ուսումնառության 2-րդ կիսամյակից սկսված իրականացվում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում (զեղչերի համակարգ) քոլեջի հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին (եթե ուսումնառության ողջ ընթացքի համար գնահատականները 10 միավորանոց գնահատման համակարգի վերահաշվարկով ցածր չեն 8 միավորից).

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ առնվազն 50 տոկոս.

3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

5) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

7) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

8) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 20 տոկոս.

1.4. Սույն կարգի 1.3 կետով նախատեսված՝ ուսման վարձի փոխհատուցման վերաբերյալ ուսանողները կիսամյակի ավարտից հետո, ոչ ուշ քան մեկշաբաթյա ժամկետում ուսման վարձի փոխհատուցման դիմում (հավելված՝ 1) են ներկայացնում քոլեջի տնօրենին՝ կցելով համապատասխան հիմքերը (Հավելված՝ 2) : Քոլեջի տնօրենը, ուսումնասիրելով փաստաթղթերի համապատասխանությունը սույն հրամանի պահանջներին, այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում համապատասխան զեկուցագիր է ներկայացնում ռեկտորին, առաջիկա կիսամյակի համար ուսանողի ուսման վարձի փոխհատուցման անհրաժեշտության վերաբերյալ, կցելով նաև համապատասխան հրամանի նախագիծը երկու օրինակից:

1.5. Սահմանված մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

1.6. Սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողների վարձը ուսանողական նպաստների ձևով հատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքում:

1.7. Ընդունող հանձնաժողովի, քոլեջի տնօրենի և կամ համալսարանի ընդունելության և ֆինանսական հարցերի գծով պրոռեկտորի ներկայացրած համապատասխան զեկուցագիր-առաջարկությունների հիման վրա կարող են կիրառվել ուսման վարձի փոխհատուցման այլ դեպքեր ևս:

1.8. Սույն հրամանով նախատեսված ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման վերաբերյալ ռեկտորի կողմից ստորագրված հրամանի մեկ օրինակը տրվում է ուսանողին, մյուս օրինակը կցվում է քոլեջի և ուսանողի միջև կնքված ուսումնառության պայմանագրին և պահվում է այդ փաստաթղթերի պահպանման համար պատասխանատու ստորաբաժանումում:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել համալսարանի ընդունելության և ֆինանսական հարցերի գծով պրոռեկտորին:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ Մ.ՄԱԿԻՉՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՍՊԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՍՊԱՌՈՒԹՅԱ